



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 16 » _____ 11 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/ - 491

Նոյեմբերի 9-15-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Նոյեմբերի 12-ին Սյունիքում դիտվել է անձրև՝ Գորիսում 19մմ, Կապանում 6մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը նոյեմբերի 9-10-ին բարձր է եղել նորմայից 1-2, 11-ին՝ 2-4 աստիճանով: Նոյեմբերի 12-ին եղել է նորմային մոտ՝ դրական և բացասական շեղումներով, նոյեմբերի 13-15-ին՝ նորմայից ցածր 1-2 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 9-11-ին: Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում գրանցվել է +17...+19°C, Լոռիում, Տավուշում՝ +13...+18°C, Սյունիքի նախալեռներում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +10...+15°C աստիճան տաքությամբ:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 14-15-ին: Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում գրանցվել է՝ -3...-8°C (Աշոցքում՝ -10°C), Սյունիքի նախալեռներում՝ -1...-5°C, Լոռիում՝ 0...-3 °C (Տաշիրում՝ -6°C), Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում՝ -2...+1°C, Տավուշում, Սյունիքի հովիտներում՝ +3...+6°C (Դիլիջանում՝ -3°C):

Դիտվել է մառախուղ՝ նոյեմբերի 10-ին Արարատում՝ 40, 13-ին Իջևանում՝ 500մ, 15-ին Վանաձորում՝ 400մ տեսանելիությամբ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2 սմ-ով և կազմել՝ 1900.56մ
(15.11.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 7 սմ-ով:

Հարգանքով՝
Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան

Տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյան
Հեռ.՝ 012-31-79-29